

<<ԲԻԹԵՐ ԴԻՎԵՐ>> ՍՊԸ

ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ և ՌԵՍՏՈՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

---

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Երևան 2017

<<ԲԻԹԵՐ ԴԻՎԵՐ>> ՍՊԸ

ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ և ՌԵՍՏՈՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

---

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

<<Բիթեր րիվեր>> ՍՊԸ տնօրեն՝

Ա. Դուրգալյան

## Հապավումների ցանկ

ՓԲԸ	-	Փակ բաժնետիրական ընկերություն
ՇՄԱԳ	-	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՄԱԳ	-	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնատում
ԲՄԿՊ	-	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՆ	-	Բնապահպանության նախարարություն
ՏԿՏՏՆ	-	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ	-	Հայաստանի Հանրապետություն
ՌԷԳ	-	Ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՊՀ	-	Պետական հաստատություն
ՊՈԱԿ	-	Պետական ոչ առետրային կազմակերպություն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ .....	3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	6
2.1 Նախատեսվող գործունեության անվանումը և մասնակիցները.....	6
2.2 Նախատեսվող գործունեության նպատակը .....	<b>Error! Bookmark not defined.</b>
2.3 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը ....	<b>Error! Bookmark not defined.</b>
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	12
3.1 ՇՄԱԳ նպատակը.....	12
3.2 ՇՄԱԳ հաշվետվության կազմը .....	12
3.3 ՇՄԱԳ մեթոդաբանությունը.....	12
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ .....	13
4.1 Իրավական շրջանակ , ՀՀ օրենսդրության պահանջներ .....	13
Միջազգային համաձայնագրեր .....	16
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	20
5.1 Ընդհանուր տեղեկություններ .....	20
5.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը.....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.3 Կլիմա .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.4 Մթնոլորտային օդ.....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.5 Ջրային ռեսուրսներ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.6 Հողային ծածկույթ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.7 Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	25
6.1 Շինարարության փուլ .....	25
6.2 Շահագործման փուլ .....	27
7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ.....	<b>Error! Bookmark not defined.</b>
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	28

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի համայնք, Երևան-Սևան մայրուղի 10/5 հասցեում նախատեսվող գարեջրի գործարանի և ռեստորանի աշխատաքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն զեկույցը մշակվել է նախատեսվող գարեջրի գործարանի և ռեստորանի կառուցման աշխատանքային նախագծի համար: Նախքան Բնապահպանական ազդեցության գնահատումը ձեռնարկելը, իրականացվել է վերանայման գործընթացը՝ բնապահպանական խնդիրները բացահայտելու նպատակով, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծերի նախապատրաստման և բնապահպանական հնարավոր ազդեցությունների վերլուծության ժամանակ:

Վերանայման գործընթացը ներառել է հետևյալ տվյալները.

Բնապահպանական գնահատման ժամանակ վերլուծվելիք աշխատանքների շրջանակի և կարևոր խնդիրների որոշումը, ներառյալ՝ ուղղակի և անուղղակի ազդեցությունները:

Խնդիրների մանրամասն ուսումնասիրությունից ոչ էական խնդիրների նույնականացումը և բացառումը, և հակիրճ նկարագրումը, թե ինչու դրանք զգալի ազդեցություն չեն ունենա շրջակա միջավայրի վրա:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2.1 Նախատեսվող գործունեության անվանումը և մասնակիցները

Նախատեսվող գործունեության անվանումն է.

**Գարեջրի գործարանի և ռեստորանի կառուցում:**

Ներկայացված գործունեությունը իրականացվում է <<Բիթեր ըիվեր>> ՍՊԸ-ի կողմից:

### 2.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

#### Շինարարության փուլ

Նախագծվող համալիրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքում Երևան-Սևան մայրուղու մերձակայքում:

Համալիրը բաղկացած է՝

- 83,5 x 21,0 մ առանցքային չափսերով և 9,3 մ առավելագույն բարձրությամբ գարեջրի գործարանից,
- 35,5 x 1,70 մ առանցքային չափսերով և 9,3 մ առավելագույն բարձրությամբ ռեստորանից,
- 40,0 x 17,0 մ առանցքային չափսերով և 6,3 մ առավելագույն բարձրությամբ սրճարանից:

Գործարանի 4-9 առանցքների և ռեստորանի D1-C1, 1-5 և C1-A1, 4-5 առանցքներով սահմանափակված տեղամասերում նախատեսվում է երկրորդ հարկ:

Բոլոր օբյեկտների կրող կմախքը կազմված է պողպատե թեթև կառուցվածքներից, որոնք միացվում են միմյանց հեղյուսներով: Սյուները միացվում են երկաթբետոնե կետային հիմքերին խարսխային հեղյուսների միջոցով:

Պատող կոնստրուկցիաները սենդվիչ-պանելներ են և վիտրաժներ: Սրճարանի պատող կառուցվածքը միայն տանիք է:

Նախատեսված է՝

- կատարել տարածքի ուղղաձիգ համահարթում,
- կառուցել համալիրի 3 հիմնական օբյեկտները,
- տեղադրել անհրաժեշտ սարքավորումները,
- կառուցել 2 բաց ավտոկայանատեղի,
- իրականացնել ինժեներական կոմունիկացիաները,
- բարեկարգել և կանաչապատել տարածքը:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Առաջարկվում է կառուցվածքների մոնտաժման **դիֆերենցիալ տարրերակ**: Առաջին փուլում մոնտաժվում են բոլոր սյուները և դրանց կապերը: Երկրորդ փուլում կատարվում է ծալեղային հեծանների և դրանց կապերի մոնտաժում: Երրորդ փուլում մոնտաժվում են մարդակները: Եզրափակիչ փուլում մոնտաժվում են պատի, ապա ծածկի սենդվիչ-պանելները: Աշխատանքների տևողության կրճատման նպատակով առաջարկելի է լրացուցիչ ավտոմոբիլային կռունկի կիրառում դրանց մասնակիորեն զուգահեռ մոնտաժման համար:

Մետաղական կառուցվածքները պետք է տրվեն մոնտաժային կռունկի ազդման գոտի այլ ավտոկռունկի միջոցով: Մոնտաժային տարրերի տեղադրումը հնարավոր է ինչպես նախապես դարսված դիրքերից, այնպես էլ տրանսպորտային միջոցներից: Հեծանները պետք է նախապես դարսվեն այնպես, որ կռունկը մոնտաժային դիրքից կարողանա տեղադրել դրանք սյուների վրա՝ առանց սլաքի թռիչքի փոփոխման (ՇԿՆ-2,4,6):

Մինչև ծալեղային հեծանի ամբարձումը դրա վրա ամրացվում են պարաններ, որոնց միջոցով բանվորները կարողանում են շտկել կեռիկից կախված հեծանի դիրքն՝ անվտանգ տեղում գտնվելով:

Մոնտաժվող հեծանը տրվում է նախագծային դիրքից 0,3 մ բարձրության վրա շտկված դիրքում: Դրանից հետո առասանող բանվորները բարձրանում են ամբարձիչ-տուրերի (կամ ավտոաշտարակների) վրա և վերջնականապես ամրացնում այն սյուներին:

**Շինարարության ժամկետները.** Շինարարության տևողությունը որոշվել է աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականության և հնարավոր համատեղման հիման վրա՝ ըստ աշխատատարության հաշվարկների:

Խոշորացված ժամանակացույցը ներկայացված է ՇԿՆ 8-ում: Աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմում է **270 օր** կամ **9 օրացուցային ամիս**: Գումարային աշխատատարությունը՝ **3731,2** մարդ/օր: Հաշվի առնելով խարսխային հեղուսների տեղադրումը՝ **3941,2** մարդ-օր:

### **Առաջարկություններ շինհրապարակի կազմակերպման և բեռնամբարձ մեխանիզմների օգտագործման վերաբերյալ**

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Որպես հիմնական մոնտաժային միջոց ընտրվել է **Liebherr LTM 1040** մոդելի ավտոկռունկը մետաղական կմախքի և սենդվիչ-պանելների մոնտաժման համար: Նախատեսված է նաև **KC-45717-1** Ивaнoвeц մոդելի ավտոկռունկի օգտագործումը զուգահեռ մոնտաժային աշխատանքների, մասնավորապես սենդվիչ-պանելների մոնտաժման համար, և **KamAz 53215** մոդելի կռունկի օգտագործումը բեռնաթափման և այլ կարիքների համար:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձների, պահեստավորման մակերեսների, ժամանակավոր ցանցերի տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծում (ՇԿՆ 1-7):

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը պետք է ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

**Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Ուղղաձիգ համահարթման աշխատանքներն նախատեսվում են իրականացնել մեքենայացված եղանակով՝ **JCB 4CX** տիպի էքսկավատորով կամ նմանատիպերով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել **KOMATSU D37-EX-22** հարթաշերտի 1,77 մ<sup>3</sup> տարողությամբ բուլդոզեր:

Խրամատների փորման համար **KOMATSU PC 35** էքսկավատոր, բաց ավտոկայանատեղիների կառուցման և բարեկարգման ժամանակ **KOMATSU WA 320** բուլդոզեր:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	JCB 4CX	1
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX22	1
3	Էքսկավատոր-բեռնիչ	KOMATSU PC 35	1
4	Բուլդոզեր	KOMATSU WA 320	1
5	Ինքնագնաց ավտոմոբիլային վերամբարձ կռունկ	LIEBHER LTM 1040	1
6	Ինքնագնաց ավտոմոբիլային վերամբարձ կռունկ	KC 45717-1	1
7	Ինքնագնաց ավտոմոբիլային կռունկ	KAMAZ 53215	1
8	Փոքր մեքենայացման միջոցներ	Կոմպլեկտ	3
9	Ասֆալտատեղադրիչ AP10550	AP 10550	1
10	Շարժիչային գլղոն CB-335D	CB – 335D	1



Աշխատանքներ	Չ/Մ	Ծավալ
<b>Կառուցման աշխատանքներ</b>		
Համահարթման հանույթ	մ <sup>3</sup>	5462
Համահարթման լիծք	մ <sup>3</sup>	1532
Հողային փորվածքներ	մ <sup>3</sup>	340
Հիմքեր և գետնախարիսխ	մ <sup>3</sup>	175
Կմախքի մետաղական կառուցվածքներ	Հատ	130
Սենդվիչ-պանելներ	Հատ	500
Հատակի նախապատրաստական երկաթբետոնե շերտ	մ <sup>3</sup>	600
Վիտրաժներ	մ <sup>3</sup>	700
Հատակներ	մ <sup>3</sup>	3550

**Շինարարական ջրի և էներգաբետուրների պահանջարկը**

NN	Անվանում	Չ/Մ	Պահանջարկ
1	Էլեկտրաէներգիա	Քաշվ, ԿՎտ	80.0
2	Ջուր	մ <sup>3</sup> /օր	2.54

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10 լ/վրկ

Նշված պահանջարկները պետք է ապահովվեն տրանսֆորմատորային ենթակայանից և ջրմուղի ցանցից:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

**Հաշվարկ**

անհրաժեշտ էլեկտրական հզորության, կՎտ

1. Ձեռքի տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ 30  
/հատիչներ, դուրեր, սղոցներ և այլն/ 3 կոմպլեկտ
2. Եռակցման ապարատներ AMՃ 305-1 20
3. Շինհրապարակի լուսավորում և կենցաղ 10
4. Շենքերի լուսավորում 40

P տեղ.= 100 կՎտ

P հաշվ.= Pտեղ.\* Kպահանջ.= 100 ԿՎտ \* 0,8=80 ԿՎտ

**Ջրօգտագործման հաշվեկշիռ**

Անվանումներ	Տեխնոլոգիական գործընթաց	Միավորների քանակը	Ջրօգտագործման նորմա			Ընդհանուր ջրածախս	Ջրամատակարարման աղբյուրները			
			Հիմնավորում	Միավոր ծախսը մ3/օր	Ջրի անհրաժեշտ		Քաղաքային ջրացանց	Արտեզ	Սեխ. ջրատու	Շրջանույ
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
<b>Տնտեսակենցաղային կարիքներ</b>										
Կենցաղային	ԻՏՍԱ	2	ՀՈՒՍԻ/04.85*	0.016	խմելու	0.03	0.03			
Կենցաղային	քանվ.	30	ՀՈՒՍԻ/04.85*	0.025	խմելու	0.75	0.75			
Դողերի լվացում	Դողերի լվացում	6	ՍԿՏԻ Սրոմստրոյ	0.14		0.84				
Շաղախի պատրաստում	Շաղախ սՅ	1.0	ԵՈՒՍ Ի-2-12ս.1	0.72		0.72	0.72			
Շինհրապարակի մաքրում	Ջրում սՅ	50.0	ԴՕՏ 12.3.00 2-75	0.004		0.2	0.2			
Ընդամենը						2.54	1.7			0.84

**Շահագործման փուլ**

Հայաստանում սննդի արդյունաբերության մեջ ոգելից խմիչքների արտադրությունը գնալով աճում է, որն իր որակյալ հատկանիշներով աննշան չափով զիջում է ներմուծվող արտադրանքին: Տեղի արտադրողները նոր սարքավորումների օգնությամբ փորձում են ավելի մրցունակ դարձնել իրենց արտադրանքը, արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության միջոցով գտնել նոր շուկաներ: Որոշ ձեռնարկություններ փորձում են հզորացնել իրենց կարողությունները, մշակել ժամանակակից շշալցման և պիտակավորման եղանակներ, նրանցից շատերը ներդրումների կարիք ունի, քանի որ տվյալ արդյունաբերության ճյուղը ունի սեզոնային բնույթ, և օտարերկրյա արտահանողները կարող են գրավել շուկայի մեծ մասը, քանի որ տվյալ սեկտորը գնալով աճում է:

Գարեջրի գործարանի արտադրողականությունը կազմելու է 50000 դալ/տարի:

Ստորև ներկայացված է գարեջրի պատրաստման տեխնոլոգիական պրոցեսը՝

1. Ածիկի աղում
2. Շաղախում. ածիկը խառնել ջրի հետ ըստ համապատասխան բաղադրատոմսի, 1.5 - 2 ժամ
3. Ֆիլտրացիա. ստացված շաղախի ֆիլտրում, 1.5 - 3 ժամ
4. Եփում. Ֆիլտրացված քաշցուի եռացում, 1 - 1.5 ժամ
5. Եփած քաշցուն սառեցնելով ուղարկվում է տարողության մեջ, 1 ժամ
6. Խմորում տանկում, 10 - 15 օր
7. Լազերիզացիա. 3 - 4 շաբաթ
8. Կեզալցում. 1.5 ժամ

Ընկերության ջրամատակարարումը իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲ ընկերության կողմից, համաձայն տրամադրված տեխնիկական պայմանի:

Արտադրության և կենցաղ-կոմունալ հոսքաջրերը հավաքվում են տարածքում առկա 50 մ<sup>3</sup> ծավալով անջրթափանց սեպտիկ հորում և ժամանակ առ ժամանակ, ըստ անհրաժեշտության հեռցվում են մասնագիտացված կազմակերպության կողմից:

### **3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

#### **3.1 ՇՄԱԳ նպատակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեղոքացմանը և/կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները, ինչպես նաև հաշվարկել շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի չափը:

#### **3.2 ՇՄԱԳ հաշվետվության կազմը**

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

#### **3.3 ՇՄԱԳ մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ը իրականացվել է ազգային էկոլոգիական օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև լավագույն միջազգային փորձի, բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան:

Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Կառուցման աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության տարածաշրջան այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- Տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- Նախագծի շահագրգիռ կողմերի հետ բանակցությունները և քննարկումները:

#### 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

##### 4.1 Իրավական շրջանակ , ՀՀ օրենսդրության պահանջներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը (ընդունված 1995 թ. և փոփոխված 2005 թ.) սահմանում է, որ պետությունը պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանության, բնական պաշարների վերարտադրության և իմաստուն օգտագործման համար: 1991 թ-ից սկսած ավելի քան 25 օրենսգրքեր ու օրենքներ, ինչպես նաև բազմաթիվ կանոնադրություններ և կանոնակարգեր են ընդունվել շրջակա միջավայրը պաշտպանելու համար: Բնապահպանության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության (ՀՀ) առանցքային բնապահպանական օրենքների ցանկը ներկայացվում է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը (1992);
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994);
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքը (1998);
- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենքը (1998);
- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը (1999);
- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը (2000);
- ՀՀ հողային օրենսգիրք (2001);
- Բնապահպանական կրթության մասին ՀՀ օրենք (2001);
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002);
- Թափոնների մասին ՀՀ օրենքը (2004);
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005);
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005);
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը (2006);
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին ՀՀ օրենքը (2006);
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011);
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքը (2014);
- Տրանսպորտի մասին ՀՀ օրենքը (1998);

- Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին (Նոյեմբեր 19, 2014թ. N1325-N):

Այս ցանկից մի քանի օրենքների ամփոփումները, որոնք առավել համապատասխանում են նախատեսվող գործունեությանը.

### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը (2014)**

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքը (ՇՄԱԳ), ընդունված 2014 թ., ապահովում է իրավական հիմք նախատեսվող գործունեության և հայեցակարգի շրջանակների պետական փորձաքննության իրականացման և ներկայացման համար, ինչպես նաև ներկայացնում է ՇՄԱԳ գործընթացի ստանդարտ քայլերը Հայաստանում տարբեր ծրագրերի և միջոցառումների համար: Այն սահմանում է 14-րդ հոդվածով տարբեր տեսակի ծրագրերի և հայեցակարգային փաստաթղթերի պարտադիր պետական ՇՄԱԳ-ի անցկացման ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպչական սկզբունքները, համաձայն որի սոցիալ-տնտեսական, էներգետիկ, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, արդյունաբերության, առողջապահության, շրջակա միջավայրի, հանգստի, սպասարկման, անտառային տնտեսության, թափոնների կառավարման, ջրային տարածքների հետ կապված հայեցակարգային փաստաթղթերը ենթակա են ռազմավարական գնահատման և փորձաքննության: Բացի այդ, նույն հոդվածի 4-րդ բաժինը սահմանում է տարբեր տեսակի առաջարկվող գործունեության նախագծային փաստաթղթերը: Օրենքի համաձայն, առաջարկվող գործողություններին հատվածներով, որոնք ենթակա են գնահատման և բնապահպանական փորձաքննության, տրվում է երեք կարգերից մեկը (A, B, C), ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազման աստիճանի: Առաջարկվող գործունեությունը առանձնացված է ըստ ոլորտների (էներգետիկա, հանքարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, դեղագործություն, մետաղների արտադրություն և վերամշակում, թափոնների կառավարում, շինանյութերի արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, ենթակառուցվածք, ջուր, քաղաքաշինություն, գյուղատնտեսություն և այլն):

Պետք է նաև նշել, որ բնապահպանական փորձաքննություն պահանջվում է այս հոդվածի բաժին 3-ում չնշված բոլոր գործողությունների համար, որոնք կատարվում են հատուկ պահպանվող բնական և անտառածածկ տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հանրության համար նախատեսված կանաչ տարածքներում:

Օրենքի համաձայն պետական անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքները մեղմելու հրատապ գործողությունները ենթակա չեն բնապահպանական փորձաքննության:

ՇՄԱԳ-ի մասին օրենքը, ընդհանուր առմամբ, համահունչ է ՇՄԱԳ-ի մոտեցումների հետ, որոնց հետևում են միջազգային կոնվենցիաները և զարգացման աջակցության գործակալությունները (օրինակ, ՀԲ, ԱՄՆ ՄԶԳ, ԵՄ, և ՀՄԿ): Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացությունը պետք է ձեռք բերել Բնապահպանության նախարարության՝ Պետական բնապահպանական փորձաքննություն՝ ՊՈԱԿ-ից մինչև շինարարական աշխատանքների սկսելը: ՇՄԱԳ-ի մասին օրենքը նաև նախատեսում է հանրության ներգրավումը և մասնակցությունը ՇՄԱԳ-ի բոլոր փուլերում:

### **ՀՀ հողային օրենսգիրք (2001)**

Հողային օրենսգիրքը սահմանում է պետական հողերի օգտագործման կառավարման համար հիմնական հրահանգները, այդ թվում տարբեր նպատակներով հատկացված, ինչպիսիք են՝ գյուղատնտեսության, քաղաքաշինության, արդյունաբերության և հանքարդյունաբերության, էներգիայի արտադրության, հաղորդման և կապի գծերի, տրանսպորտային և այլ նպատակներով: Օրենսգիրքը սահմանում է հողերը, որոնք հատուկ պահպանվող տարածքներում են, ինչպես նաև անտառածածկ, ջրվող և պաշտպանված հողերը: Այն նաև սահմանում է միջոցներ, որոնք ուղղված են հողերի պահպանության, ինչպես նաև պետական մարմինների տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների հողի նկատմամբ իրավունքները:

պատճառված վնասների փոխհատուցումը, ինչպես նաև պետական մոնիտորինգի և իրավական խախտումների պահանջները: Օրենքը սահմանում է պետական կառավարական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները և **Թափոնների մասին օրենքը (2004)**

Օրենքը կարգավորում է իրավական և տնտեսական հարաբերությունները՝ կապված թափոնների հավաքման, տեղափոխման, պահպանման, մշակման, կրճատման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման հետ: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, հիմնական սկզբունքներն ու ուղղությունները պետական քաղաքականության, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտիզացման, գույքագրման և վիճակագրական տվյալների ներդրման սկզբունքները, իրենց պահանջների և մեխանիզմների իրականացումը, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնները պետական մոնիտորինգի ներկայացնելու պահանջները, թափոնների քանակը նվազեցնելու գործունեությունը, այդ թվում, բնօգտագործման վճարները, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից թափոնների օգտագործմամբ մարդու առողջությանը և շրջակա միջավայրին պարտականությունները:

### **Բնապահպանական մոնիտորինգի մասին օրենքը (2005)**

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման և կատարման խնդիրները, և սահմանում իրավական և տնտեսական հիմքերը, որոնք ընկած են վերահսկման առանձնահատկությունների հիմքում, համապատասխան կարգը, պայմանները և հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում: Գոյություն ունեցող իրավական դաշտը, որը կառավարում է բնական ռեսուրսների օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանությունը, ներառում է իրավական փաստաթղթերի մեծ քաղաքականություն: Պետական քանաձևերը բնապահպանական օրենքների իրականացման հիմնական իրավական գործիքներն են: Բնապահպանական դաշտը կարգավորվում է նաև նախագահական հրահանգների, վարչապետի քանաձևերի և նախարարական հրամանագրերի միջոցով:

### **Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք (2006)**

Սույն օրենքի նպատակն է բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն զարգացման, շինարարական, էկոհամակարգերի պահպանման և օգտագործման, բնության համալիրների և բնության հատուկ պահպանվող տարածքների առանձին օբյեկտների բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայի կարգավորման, հանգստի կամ հոգեվոր արժեքների նկատմամբ սահմանել պետական քաղաքականության իրավական հիմունքները: Հայաստանի պահպանվող տարածքների համակարգը ընգրկում է 3 պետական արգելոցներ, 4 ազգային պարկեր և 33 պետական արգելավայրեր: Բացի վերոնշյալից ևս 3 տարածքներ նախատեսվում է ավելացնել պահպանվող տարածքների ցանկին:

#### **Միջազգային համաձայնագրեր**

Ի լրումն վերը ներկայացված օրենքների ցանկի և ամփոփումների, մշակվել են քաղաքիվ ռազմավարություններ, հայեցակարգային շրջանակներ և ազգային ծրագրեր՝ կապված բնության պահպանության հետ, ինչպես նաև մի շարք միջազգային համաձայնագրեր ու կոնվենցիաներ են ստորագրվել և վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից (տես աղյուսակ 5):



Աղյուսակ 5. ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաների ցանկը

N	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթություն
1	Կոնվենցիա միջազգային նշանակության գերխոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայրեր (Ռամսար, 1971)	1975	1993	Հաստատվել է ԽՍՀՄ-ի կողմից	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993թ.
3	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն (Կարթագենա, 2000)		2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993թ.
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)			2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2003թ.
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժեներվա, 1979)	1983		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997թ.
7	Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991)	1997		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997թ.
	Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
8	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների	2000		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում

	մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992)				1997թ.
	Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համար քաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (Փարիզ, 1994)	1996	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997թ.
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային վերահսկման և դրանց տեղափոխման նկատմամբ հսկողության սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1992		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999թ.
	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1988		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999թ.
11	Օզոնայի շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1989		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999թ.
12	Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998)	2001	1998	2001	
13	վտանգավոր քիմիական նյութերի և պետիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա, (Ռոտերդամ, 1998)		1998	2003	
	Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի օգտագործման և պահպանության մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992)	1996	1999		
14	Միջազգային առևտրում առանձին Ջրի և առողջության մասին		1999		

	արձանագրություն (Լոնդոն, 1999)				
15	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)		2001	2003	
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ տեսակի թշնամական օգտագործումը արգելելու մասին կոնվենցիա (Ճենեվա, 1976)	1978		2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002.
17	Լանդշաֆտների Եվրոպական կոնվենցիան (Ֆլորենսիա, 2000)			2004	
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)			1993	
19	Էներգետիկ խարտիայի համաձայնագիր (Լիսբոն, 1994)			1997	
	Էներգետիկ արդյունավետության և դրան առնչվող շրջակա միջավայրի համապատասխան հարցերի մասին Էներգետիկ խարտիայի արձանագրություն (Լիսաբոն, 1994)			1997	
20	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	1982	2006		

## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 5.1 Ընդհանուր տեղեկություններ

Արզնին առողջարանային գյուղ է ՀՀ Կոտայքի մարզում: Գտնվում է մարզկենտրոնից 29 կմ հարավ-արևմուտք, Երևանից 23 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի ձախափնյա սարավանդի վրա, ծովի մակարդակից 1340 մ բարձրության վրա:

Գյուղը հիմնվել է 19-րդ դարում, Պարսկաստանից Արևելյան Հայաստան տեղափոխված ասորիների կողմից: Բնակչությունը կազմում է 2,529 մարդ (2009), հիմնականում՝ ասորիներ:

Արզնին առողջավայր է, հայտնի է իր հանքային ջրերով: Արզնիի առողջարանները կառուցված են նաև Հրազդանի կիրճում, գետի երկու ափերին:

### 5.2 Տարածքի բնակլիմայական պայմանները

Շրջանն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, խիստ ցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 390K: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է - 300K: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 306 մմ: Գերակշռում են 3.0 մ/վրկ արագության հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 23 մ/վրկ արագության (ուժգնության) քամիներ: Չյան ծածկոցի հաստությունը հասնում է 60 սմ, ճնշումը՝ 70 կգո/մ<sup>2</sup> : Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 80 սմ:

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը (CO)

Կայան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջ. տարեկ.
Արզնի	-2.7	-0.5-	5.6	12.0	17.0	21.1	26.1	25.8	20.9	13.6	6.6	0.3	12.2

Օդի միջին ամսական և տարեկան հարաբերական խոնավությունը (%)

Կայան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջ. տարեկ.
Արզնի	72	66	65	68	62	53	50	49	53	62	73	77	62

Ամսական և տարեկան տեղումները (մմ)

Կայան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
Արզնի	39	38	49	64	75	43	24	15	20	44	44	34	489

### 5.3 Տարածքի երկրաբանական կառուցվածքը

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Հրազդան գետի ձախափնյա հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևմտյան մասում: Ռելիեֆի ձևերից տարածքում առկա են Հրազդան գետի կիրճի զառիթափ, ուղղաձիգ կողաեզրը, որը ձգվում է հյուսիսից հարավ ուղղությամբ, տարածքի ամբողջ երկարությամբ, տափարակները, դելյուվիալկուտակումային և էռոզիոնահողմնահարման լանջերը, բլուրները և թմբերը, ջրբաժանները, հեղեղատ ձորակների հովիտները, հուները և տավեզները:

Ռելիեֆը խորդուբորդ է, լանջերի թեքությունները տարածքի արևելյան մասերում մեծ են և կտրուկ, երբեմն ուղղաձիգ:

Մակերեսի նիշերը տատանվում են 1340.0-1350.0 մետրի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների, մասամբ բերվածքային ծագման շերտախմբերի չստորաբաժանված համախմբերի հետ: Ստորգետնյա ջրերը, մինչև 15.0 մետր խորությունը, չեն բացահայտվել:

Մակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մակերեսային ջրերը ներթափանցելով տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների շերտերի մեջ, կուտակվելով և գետնովելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի «ցածրադիր», «վոս» ընկած, ճկված և ճեղքավորված մասերում կարող են առաջացնել «թաքնված» ջրափոսեր, խոնավացած և ջրավորված տեղամասեր:

Հետազոտվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- ասֆալտաբետոնե ծածկոց,
- լիցքային գրունտներ,
- հողաբուսական ծածկույթ,
- խոշորաբեկորային գրունտներ,
- կավային գրունտներ,
- կիսաժայռային և ժայռային գրունտներ :

Ասֆալտաբետոնե ծածկոցը, լիցքային գրունտները և հողաբուսական ծածկույթն ինժեներաերկրաբանական տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում: Խոշորաբեկորային գրունտները ներկայացված են կարբոնատային կեղևով և խճամեծաբեկորային գրունտներով: Կարբոնատային կեղևի, մասամբ խճամեծաբեկորային գրունտների կավավազավազային լցանյութը, ինչպես նաև կավավազները ցուցաբերում է ենթաողողամաշման (субфлювиал) առանձնահատկություններ:

## 5.4 Բնական միջավայրը

### 5.4.1 Կենսաբազմազանություն

#### Բուսական աշխարհ

Բնական բուսածածկի տիպերից առկա է կիսաանապատային բուսականություն՝ Օշինդրա-Էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrate* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan):

Վայրի օգտակար բուսատեսակներից են՝ անթառամ հայկական (*Helichrysum armenium*), գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*):

Բույսերի էնդեմիկ տեսակներից տարածքում առկա են՝ զանգակազգիներ (*Campanulaceae*), Չանգակ Խոցյատովսկու (*Campanula bayerniana* ssp. *choziatovskui*):

Հայաստանի Կարմիր գրքում ներառված բուսատեսակներից տարածքում առկա են՝ Թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), Երնջնակ Վանատուրի (*Eryngium wanaturii*):

Սակայն հատակագծում նախատեսված միջոցառումների տարածքներում Հայաստանի Կարմիր գրքում ներառված բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

**Կենդանական աշխարհ**

Ողնաշարավոր կենդանիներից տարածված է՝ գյուրգան:

Հանդիպում են ամենուր՝ լճագորտ, ժայռային մողես, սովորական լորտու, տնային ճնճողուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, գայլ, աղվես, քարակաքիս, աքիս: Անողնաշարավորներից՝ անձրևաորդ, ծովախեցգետին, մրջյուն, մեղու, ծղրիղ, ճիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, կաղամբաթիթեռ, մոծակ, դաշտային ճանճեր:

Միջատների էնդեմիկ տեսակներից են՝ Աղաբաբյանի ոսկեբզեզը (*Sphaerobothris aghababiani* Volk. & Kalashian):

Հայաստանի կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող կենդանատեսակից տարածքում առկա է՝ քորդավորների տիպին և կաթնասունների դասին պատկանող Մեծ պայտաքիթը (*Rhinolophus ferrumequinum* Schreb.):

Սակայն հատակագծում նախատեսված միջոցառումների տարածքներում Հայաստանի Կարմիր գրքում ներառված կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել:

**Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ)**

Կոտայքի մարզը բնորոշվում է հարուստ բուսական և կենդանակ աշխարհով: Հազվադեպ և անհետացող տեսակները պահպանելու համար մարզում ստեղծված են մի շարք ԲՀՊՏ-ներ:

Տարածաշրջանի ԲՀՊՏ-ների ցանկը և բնութագրերը բերված են աղյուսակ 5.4.1-ում:

Աղյուսակ 5.4.1.

<i>ԲՀՊՏ-ի անվանումը</i>	<i>Ստեղծման տարեթիվը</i>	<i>Զբաղեցրած տարածքը</i>	<i>Տեղադիրքը և հեռավորությունը Բյուրեղավանից</i>	<i>Պահպանման օբյեկտը</i>
“Արգաքանի և Մեղրաձորի” պետական արգելավայր	1971	13532 հա	Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններ 1600-2100մ. բարձր. վրա: Հեռավորությունը՝ 9 - 10 կմ	Հազվագյուտ և արժեքավոր կենդանիներ /այծյամ, ազնվացեղ եղջերու, գորշ արջ/
“Հանքավանի ջրաբանական” պետական արգելավայր	1981	5169 հա	Հեռավորությունը՝ 40 կմ:	«Հանքավան» հանքային ջուր և այլ ջրային պաշարների սնման ավազաններ
“Բանքսի սոճու” պետական արգելավայր	1958	4 հա	Հրազդանի շրջանի մարմարիկ գետի ավազան, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսասիայաց լանջեր, 1800-2000 մ.բարձ. վրա: Հեռավորությունը՝ 10 – 12 կմ:	Բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակ
“Էրեբունի” պետական արգելոց	1981	118,7հա	Հեռավորությունը՝ 18-20 կմ:	վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդ

Ինչպես երևում է աղյուսակ 5.4.1-ից, Արզնիի անմիջական հարևանությամբ ԲՀՊՏ-ներ չկան: Մարզում առկա են նաև երկրաբանական-20, ջրաերկրաբանական-5, ջրագրական-4, բնապատմական-1, կենսաբանական-3 բնության հուշարձաններ:

## 5.4.2 Ջրային ռեսուրսներ

Արզնի գյուղը գտնվում է Հրազդան գետի ջրհավաք ավազանում:

Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ<sup>2</sup> է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը:

Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակը վերահսկվում է «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» /Հայէկոմոնիտորինգ/ ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության ,Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին երոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում

մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Համաձայն Հայէկոմոնիտորինգ-ի 2015 թվականի տարեկան տեղեկանքի Հրազդան գետի Քաղսի գյուղից ներքև և Արզել գյուղից ներքև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Գեղամավանի մոտ և Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Գեղամավանի մոտ հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Տարածաշրջանի մակերեսային ջրերը բնորոշվում են միջին հանքայնացմամբ՝ 400-500մգ/լ, չափավոր կոշտությամբ ( $Ca^{2+}+Mg^{2+}$  իոնների պարունակությունը կազմում է 3.0-6.0մգ-էկվ/լ), բարձր ազոտի վրա՝  $HCO_3^-$  իոնների պարունակությունը գերազանցում է 2.0 մգ- էկվ/լ:

Տարածքի ստորգետնյա ջրավազանը հարուստ է բարձրորակ քախցրահամ ջրերով, որոնք աղբյուր են հանդիսանում ջրամատակարարման համար:

Տարածքի մակերեսային ջրերը ունեն թույլ սելավավտանգություն:

## 5.4.3 Մթնոլորտային օդ

Հայաստանի Հանրապետության տարածքում օդի աղտոտվածության մոնիթորինգը իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության ,Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ը (Էկոմոնիթորինգ):

Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Արարատ քաղաքներում մթնոլորտային օդի ակտիվ եղանակով մնուշառումներ իրականացվում են 16 ստացիոնար դիտակայանում: Մի շարք քաղաքներում պասիվ մնուշառման եղանակով կատարվում են ազոտի և ծծմբի օքսիդների դիտարկումներ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Գրա համար “Էկոմոնիտորինգ”-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց: Ըստ այդ ուղեցույցի Բյուրեղավան քաղաքի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Փոշի՝  $0.3 \text{ մգ/մ}^3$ ;

- Ծծմբի երկօքսիդ՝  $0.05 \text{ մգ/մ}^3$ ;
- Ազոտի երկօքսիդ՝  $0.015 \text{ մգ/մ}^3$ ;
- Ածխածնի օքսիդ՝  $0.8 \text{ մգ/մ}^3$ :

### **5.5 Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները**

Հաշվի առնելով և ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների բնույթից և ծավալներից, հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական նախանշաններից և լիթոլոգիական կտրվածքից ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են 3 ինժեներաերկրաբանական շրջաններ՝

- բարենպաստ,
- պայմանական բարենպաստ,
- անբարենպաստ:

Համաձայն ՀՀՇՆ II–6.02.2006 շրջանը և տարածքը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ, ուստի գրունտների հորիզոնական տատանման ելակետային արժեքը պետք է ընդունել՝  $0.30g$ ;



## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Բնապահպանական ազդեցության գնահատման հաշվետվության այս բաժինը անդրադառնում է գարեջրի գործարանի և ռեստորանի կառուցման և շահագործման աշխատանքներով պայմանավորված կարևորագույն հնարավոր բնապահպանական ազդեցություններին:

Ընդհանուր առմամբ հնարավոր բացասական բնապահպանական ազդեցությունները, որոնք պայմանավորված են շինարարական աշխատանքներով՝ ակնկալվում է, որ կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված: Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների զգալի մասը կդիտարկվի շինարարական/ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում և տեղի կունենա աշխատանքների իրականացման ժամանակ: Շինարարության փուլում հավանական բացասական բնապահպանական ազդեցությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալ ազդեցություններով՝ հողերի դեգրադացիա, քանդված նյութերի և շինարարական աղբի ոչ ճիշտ տեղադրման արդյունքում լանդշաֆտի և հողի էրոզիա, շինարարության ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսք, ջրային ռեսուրսների աղտոտում, շինարարական հրապարակների ժամանակավոր օգտագործում (շինարարական ճամբարներ, մեքենաների և շինարարական տեխնիկայի կայանման հրապարակներ, պահեստարաններ և այլն), հողային զրուստների ձեռքբերման տարածքի օգտագործում, շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության ավելացմամբ օդի ժամանակավոր աղտոտում, անհարմարություններ կապված աղմուկի և վիբրացիայի հետ:

Մյուս կողմից շինարարական աշխատանքներով պայմանավորված դրական սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունները ակնկալվում են, որ կլինեն նշանակալի, քանի որ ծրագրի իրականացումը կապահովի նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն (ներառյալ շինարարության փուլում ժամանակավոր աշխատատեղերի հնարավորությունը), լավ հնարավորություններ կստեղծվի արդյունաբերական ոլորտի զարգացման համար, կնպաստի գյուղական վայրերում միգրացիայի նվազմանը: Առաջարկվող ծրագրից ակնկալվող ընդհանուր դրական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կլինեն երկարաժամկետ և կնպաստեն ազդակիր համայնքների սոցիալական և տնտեսական աճին:

Գարեջրի գործարանի և ռեստորանի շինարարության և շահագործման փուլերում հնարավոր անբարենպաստ բնապահպանական ազդեցությունները նկարագրված են ստորև:

### 6.1 Շինարարության փուլ

**Ազդեցություններ ժամանակավոր մոտեցնող ճանապարհներից և աշխատանքային տեղամասերից:** Ժամանակավոր հողային ճանապարհների ստեղծումը շրջանցելու համար, այն հատվածները, որտեղ իրականացվում են շինարարական աշխատանքները, ինչպես նաև շինարարական նյութերի պահեստների մուտքերն ու աղբի ժամանակավոր կուտակման վայրերը, շինարարական ճամբարները, շինարարական մեքենաների և տեխնիկայի կայանման վայրերը կարող են բարձրացնել հողի էրոզիան և բերել լանդշաֆտի դեգրադացիայի:

**Աղտոտում շինարարական հրապարակներից եկող հոսքերով:** Սարքավորումներից և պահեստավորված շինարարական նյութերից և ասֆալտից արտահոսքի արդյունքում նավթը,

նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են ներթափանցել ստորգետնյա ջրերի մեջ կամ արտահոսել դեպի մակերևութային ջրհոսքեր:

**Քանդված նյութերի և շինարարական աղբի առաջացում:** Քանդված աղբը կարող է առաջանալ շինարարական աշխատանքների ընթացքում: Այս ազդեցությունները կլինեն տեղայնացված և կնվազեցվեն համապատասխան հեռացման և տեղադրման միջոցառումների կիրառմամբ:

**Փորված նյութերի և շինաղբի հեռացում:** Շինարարական և վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր է շինարարական աղբի առաջացում: Այս ազդեցությունները լինելու են տեղայնացված և կմեղմացվեն աղբի հեռացման և թափման համապատասխան գործողությունների արդյունքում, որոնք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի պատշաճ ընտրությամբ, այս վայրերի սահմանների հստակ ուրվագծմամբ՝ դրանց ընդարձակումից խուսափելու նպատակով, նման վայրերից արտահոսքի կանխարգելմամբ, աղբաթափման վայրի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր համաձայնության ձեռքբերմամբ, թափոնները աղբաթափման վայր պատշաճ ժամանակին տեղափոխմամբ:

**Լանդշաֆտի դեգրադացիա և հողի էրոզիա:** Որոշ տարածքներ զգայուն են հողերի էրոզիայի նկատմամբ: Հետևաբար, հողային և բարեկարգման աշխատանքների ժամանակ պետք է իրականացվեն հակա-էրոզիոն միջոցառումներ:

**Աղմուկ, ցնցումներ և արտանետումներ.** աղմուկի, ցնցումների և արտանետումների առաջացումը կապված է շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում: Եռակցման աշխատանքները բերում են եռակցման աերոզոլի և մանգանի մոնօքսիդի արտանետումներին: Բետոնախառնիչների աշխատանքը հանգեցնում է բետոնի փոշու արտանետմանը:

Շինարարական աշխատանքներից առաջացած փոշին բացասական ազդեցություն են թողնում մթնոլորտի / օդի որակի վրա, և հետևաբար անհրաժեշտ է արդյունավետ միջացառումներ ձեռնարկել այդ բացասական ազդեցությունը, հատկապես բնակավայրերում և պահպանվող տարածքներում, նվազագույնի հասցնելու համար:

**Կենսաբազմազանության վրա ազդեցություններ:** Շինարարական աշխատանքների արդյունքում կենսաբազմազանության վրա հիմնականում ազդեցություններ չեն ակնկալվում: Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում կարող է տեղի ունենալ բուսական ծածկի և վայրի կենդանիների բնակության վայրերի խանգարում/վնասում: Հողային զանգվածների օտարումը, խճի արդյունահանումը և տեղադրման տարածքների աղտոտումը ժամանակավոր բացասական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի վրա: Այդ տարածքների համար պետք է ընտրվեն արդեն իսկ օգտագործված հանքավայրերի տարածքները՝ նվազեցնելու համար ազդեցությունները շինարարության ընթացքում և ավելի ուշ՝ շահագործման ընթացքում:

**Համայնքի առողջություն և անվտանգություն:** Ծրագիրը կարող է փոխել համայնքի ռիսկերի և ազդեցությունների ենթարկվելը, որոնք կարող են առաջանալ պատահարների և

ենթակառուցվածքների քանդմամբ: Շինարարության ընթացքում համայնքի առողջության և անվտանգության ազդեցության ենթարկվելու վտանգը կարող է պայմանավորված լինել նաև աղմուկի ազդեցությամբ, հողի տեղափոխմամբ պայմանավորված փոշու և այլ արտանետումներով, պայթեցման աշխատանքների իրականացմամբ, լիցքի աշխատանքներով, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների շահագործմամբ: Սակայն, շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած բացասական ազդեցությունները կարելի է նվազեցնել շինարարական գործընթացների և առաջարկվող մեղմացնող միջոցառումների պատշաճ կազմակերպմամբ:

**Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ:** Վտանգը կարող է առաջանալ առողջության և անվտանգության կանոնների ոչ պատշաճ իրագործման դեպքում: Անվտանգության միջոցառումների և համապատասխան երկարատև շինարարական փորձի պատշաճ կիրառման դեպքում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հիմնականում վտանգներ չեն ակնկալվում:

**Բնակչության վրա ազդեցություններ:** Բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Նախատեսվող գործունեությունը որոշակի ազդեցություն կթողնի այն վայրերի աշխատուժի ժողովրդագրական կառուցվածքի վրա, որտեղ կատարվում են ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները: Այն հնարավորություն կստեղծի երիտասարդների համար մնալ նախատեսվող աշխատանքների իրականացման տարածքում և ներգրավվել իրականացվելիք աշխատանքներում:

## 6.2 Շահագործման փուլ

**Ջեռուցում.** Գարեջրի գործարանի և ռեստորանի ջեռուցումը իրականացվելու է Չիլլեր համակարգով, այդ իսկ պատճառով արտանետումներ տեղի չեն ունենալու:

**Թափոններ.** Արտդրական գործընթացում առաջացող թափոնները կտրամադրվեն գյուղացիներին:

**Ջրահեռացում.** Գարեջրի գործարանի և ռեստորանի շահագործման ընթացքում առաջացող կոմունալ-կենցաղային հոսքաջրերը կուղվեն դեպի կոյուղու բակային ցանց, այնուհետև ինքնահոս դեպի տարածքում նախատեսվող անջրթափանց կոյուղու հոր:

7. **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Մեղմացնող միջոցառումները, որոնք կարող են կիրառվել համապատասխան վայրերում սահմանված են շինարարության փուլերի համար:

Շինարարության փուլը, դա այն ժամանակահատվածն է երբ շրջակա միջավայրի վրա տեղի են ունենում հիմնական ազդեցությունները: Սա ներառում է բուսականության մաքրումը և փորումը, վառելիքի, յուղի, բիտումի, քիմիկատների համար պահեստների ստեղծումը, աշխատանքային ժամերի ընթացքում փոշու արտանետումները և աղմուկ, և այլն: Լանդշաֆտների դեգրադացիայի, հողի էրոզիայի, քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրման հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար շինարարության համար նյութերի լրացուցիչ նյութերի օտարումնտեղափոխումն հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեող հանքավայրերից, իսկ քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրումը հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեցող հանքավայրերի սպառված հանքափոսերում՝ նվազեցնելով նոր հանքավայրերի ձեռքբերման անհրաժեշտությունը: Աշխատանքային տեղամասերը պետք է հստակ ուրվագծված լինեն և պետք է հետևել, որպեսզի շինարարական աշխատանքների ընթացքում այն անհարկի չընդլայնվի: Աշխատողները իրենց իսկ անվտանգության համար պետք կրեն անհատական պաշտպանիչ պարագաներ: Շինարարական հրապարակներից եկող փոշին և աղմուկը նույնպես պետք է նվազեցվեն հատկապես բնակեցված հարակից տարածքներում: Շինարարության արդյունքում առաջացող բետոնե մնացորդները, շինարարական աղբը և թափոնները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն հաստատված աղբավայրերում/թափոնների տեղադրման տարածքներում: Շինարարական և վերականգնողական աշխատանքների ավարտից հետո պետք է բնական պայմաններին մոտ վերականգնել լանդշաֆտը: Առաջարկվող մեղմացնող միջոցառումների մանրամասները ներկայացված են ստորև.

**Շինարարական հրապարակից հոսքերի կառավարում:** Հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն գոյություն ունեցող մոտեցնող ճանապարհները, խուսափելով նոր ճանապարհների ստեղծումից: Կիրականացվի շինարարական հրապարակների և մոտեցնող ճանապարհների վերին մակերևույթների տոփանում՝ տարածքը ջրային հոսքերից և հեղեղումներից զերծ պահելու համար: Այն կարող է պահանջել դրենաժային առուների փորում կամ միացում գոյություն ունեցող բնական դրենաժային համակարգերին/անձրևաջրերի հեռացման համակարգերին:

Աշխատանքային տեղամասերը, մեքենաների սպասարկման տարածքները և շինարարական ճամբարները պետք է գտնվեն գետերից հեռու կանխարգելելու համար ջրի որակի վրա բացասական ազդեցությունները: Շինարարական

սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի և շինարարական հրապարակից ֆեկալ արտանետումների հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

**Թափոնների կառավարում:** Եթե բուսական ծածկով տարածքը նախատեսվում է օգտագործել, որպես շինարարական հրապարակ, այդ դեպքում հողի բերրի շերտը պետք է հանվի և պահվի 1մ չգերազանցող կոյտերում և այն պետք է օգտագործվի բարեկարգման աշխատանքների ժամանակ: Շինարարական աղբը և բետոնի մնացորդները կտեղափոխվեն և կտեղադրվեն հաստատված վայրերում: Շինարարական թափոնների և քանդված նյութերի տեղափոխման/տեղադրման համար պետք է ստանալ տեղական կամ համայնքային իշխանությունների համաձայնությունը/թույլտվությունը կամ կնքել համապատասխան պայմանագիր հատուկ մասնագիտացված կազմակերպություն հետ, վերոնշյալ աշխատանքները կատարելու համար: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կկատարվի լանդշաֆտի վերականգնում:

**Աղբի և կեղտաջրերի կառավարում:** Աղբի հավաքման տարրաներ կտեղադրվեն շինարարական հրապարակի հարակից տարածքներում, որը նախատեսված կլինի շինարարական աշխատանքների ընթացքում կենցաղային աղբի հավաքման համար: Տարածքից աղբի ժամանակին տեղափոխման և տեղադրման համար համաձայնագիր/պայմանագիր կկնքվի համապատասխան պետական մարմնի կամ կազմակերպության հետ: Կոյուղաջրերը կթափվեն կոյուղու կենտրոնացված համակարգ: Այն դեպքերում, երբ համայնքում բացակայում է կոյուղու կենտրոնացված համակարգը կոյուղացված ջրերը պետք է հավաքվեն հատուկ տարողության մեջ և պարբերաբար հեռացվեն մոտակա կոյուղու կենտրոնացված համակարգ հատուկ մասնագիտացված կազմակերպությունների միջոցով: Վերանորոգման աշխատանքների բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով, պետք է այդ աշխատանքները համաձայնեցվեն համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

**Աղմուկի, վիբրացիայի և արտանետումների կառավարում:** Շինարարական հրապարակում փոշու ազդեցությունը կանխարգելելու նպատակով կիրականացվի տարածքների պարբերաբար ջրցանում: Շինարարական աշխատանքների ընթացքում մեքենաների ծխագազային արտանետումների և փորման/քանդման աշխատանքների հետևանքով կմեծանա օդի աղտոտվածությունը: Շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար ջրցանումը կնվազեցնի փոշու ազդեցությունը:

Շինարարական հրպարակներից փոշու և աղմուկի ազդեցությունները նվազեցնելու համար շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական և յութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) և թափոնների տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով: Մոտակա համայնքների բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաներն ու սարքավորումները կահավորված կլինեն համապատասխան խլացուցիչներով, ինչպես նաև դրանք կշահագործվեն տեխնիկական նորմալ վիճակում: Վերանորոգման աշխատանքները կիրականացվեն օրվա ցերեկային ժամերին: Օդի որակի պահպանության նպատակով նախատեսվում է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ, որոնք ներառում են ասֆալտ գործարանների, բետոնի պատրաստման գործարանների և նյութերի պահեստավորումն հատուկ առանձնացված տարածքներում, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաների տեղաշարժը հաստատված երթուղիներով և ժամանակացույցով:

**Լանդշաֆտների պահպանում և հողի էրոզիայի նվազեցում:** Լանդշաֆտների դեգրադացիան և հողերի էրոզիան նվազեցնելու նպատակով Կապալառու(ներ) շինարարական նյութերի ձեռքբերման համար հնարավորության դեպքում պետք է օգտագործեն գոյություն ունեցող հանքավայրեր: Առաջնահերթորեն կարելի է օգտագործել քանդված հողային զանգվածները դրանով սահմանափակելով հին և նոր հանքավայրերի անհրաժեշտությունը:

**Կենսաբազմազանության պահպանում:** Ազդեցությունը կենսաբազմազանության վրա կլինի նվազագույն, քանի որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են գոյություն ունեցող կառույցներում: Ցամաքային կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենահնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից դուրս (գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներ), իսկ այնուհետ՝ շինարարական աշխատանքների ընթացքում վախի գործոնը կենդանիներին կստիպի որոնել առավել հուսալի կացարաններ և նրանք կհեռանան կից՝ շատ ավելի մեծ մակերեսներ և մման պայմաններ ունեցող մերձ տարածքներ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կհասցվի նվազագույնի:

Շինարարության ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն ժամանակավոր, կարճատև և կազդեն աննշան տարածքների կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

**Անվտանգության կառավարում:** Շինարարական աշխատանքների ընթացքում ոչ մի լուրջ վտանգ չի սպավում քանի դեռ կիրավում են շինարարական աշխատանքների անվտանգության ընթացակարգերը: Աշխատանքային տեղամասերը պետք է հստակ ուրվագծված և սահմանափակված լինեն (նախընտրելի է ցանկապատով); աշխատանքային տեղամասերի մուտքը պետք է խստորեն հսկվի և սահմանափակվի լիազորված անձանց կողմից: Անհատական պաշտպանիչ միջոցները պետք է հասանելի լինեն և կիրառվեն աշխատանքների իրականացման ժամանակ: Բոլոր

աշխատողները, մինչ շինարարական աշխատանքներում ներգրավվելը պետք է անցնեն համապատասխան դասընթացներ և հրահանգավորվեն ( ներառյալ առաջին բուժօգնության դասընթացներ):

**Հանրության իրազեկում:** Բնակչության վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը պետք է պարբերաբար տրամադրվի համայնքին (ներառյալ շինարարական աշխատանքների իրականացման վայրը և տևողությունը): Տեղի բնակչությունը պետք է պատշաճ տեղեկացված լինի շինարարական աշխատանքների սկսելու վերաբերյալ (առաջարկվող շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի տեղական ինքնակառավարման մարմինների վեբ կայքերում, ինչպես նաև այդ մասին պետք է իրազեկվի թերթերի, հեռուստատեսությունների և համայնքի ղեկավարների միջոցով): Շինարարական աշխատանքները սկսելու, մեքենաների տեղաշարժը սահմանափակելու, այլընտրանքային մուտքերի և ճանապարհների շրջանցման վերաբերյալ պայմանավորվածությունների ծանուցումը պետք է նախապես տրամադրվի ազդակիր համայնքին:

Նախատեսվող գործունեությունը պետք է ունենա բողոքների ներկայացման հաստատված մեխանիզմ, որը թույլ կտա ազդակիր կողմերին բարձրացնել իրենց մտահոգություններն ու ստանալ պատասխան: Բողոքների և մտահոգությունների վերանայման տեղեկատվությունը, ինչպես նաև ներգրավված կողմերի որոշումները պետք է ազդակիր համայնքներում հրապարակայնորեն մատչելի և հասանելի լինեն:

## ՕԳՏԱԳՈՂՈՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում: